ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1701-Ա « 05 » մայիսի 2025թ.

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

3.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
05.05. 2025թ.
հ. 1701-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Շավարշ Սարգսյան /լիազորված անձ/ Սվետլանա Հակոբյան և Մերի Բաղալյան	Լևոն Խեչոյան /Արաբկիր 17-րդ/ փողոց, հ.16	բնակելի տուն	Ըստ օրենքի ժառանգության իրավունքի 14.04.2022թ. հ.2836 և հ.2837 վկայագրերով Սվետլանա Հակոբյանին և Մերի Բաղալյանին փոխանցված ժառանգական գույքին՝ Լևոն Խեչոյան /Արաբկիր 17-րդ/ փողոցի հ.16 հասցեում գտնվող բնակելի տանը տրամադրել հասցե՝ Լևոն Խեչոյան փողոց, հ.16/3	01033CLHMSPP	
2	Գագիկ Հայրապետյան	Եր. Քոչարի փողոց, հ.15 շենք, հ.27	բնակարան	Գագիկ Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող, Եր. Քոչարի փողոցի հ.15 շենքի հ.27 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.21032025-01-0143, ընդհ. բաժն. 1.3քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 42.3քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Եր. Քոչարի փողոց, հ.15 շենք, բն.27/1	010639ALRHGY	
3	Աիդա Մինասյան	Նոր Արեշի 30-րդ փողոց, հ.48 և հ.48/1	հողամաս	Աիդա Մինասյանին սեփականության իրավունքով պատկանող, Նոր Արեշի 30-րդ փողոցի հ.48 և հ.48/1 հասցեներում գտնվող հողամասերին /վկ. հ.23022021-01-0174 և հ.16072021-01-0129/ ըստ միավորման հատակագծի, տրամադրել մեկ միասնական հասցե՝ Նոր Արեշ 30-րդ փողոց, հ.48	01053HZCZ45J	

4	Ռոլանդ Ամիրջանով	Գևորգ Ջահուկյան փողոց, հ.237/13	հողամաս	Ռոլանդ Ամիրջանովին սեփականության իրավունքով պատկանող, Գևորգ Ջահուկյան փողոցի հ.237/13 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.11032025-01-0307, շին. 123.4քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 393.81քմ մակերեսով մասին, տրամադրել հասցե՝ Գևորգ Ջահուկյան փողոց, հ.237/18	01093VLHANLF	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ